**Հավելված 4**
«ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃ-2/19-ԲՆԱ» **ծածկագրով**
**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԷԱՃ-2/19-ԲՆԱ/1
## N______________________

Հ. Հ. «__» _____ 2019թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն-ը ի դեմս Արամ Հակոբյան-ի, որը գործում է ՀՀ ազգային անվտանգության ծառայություն-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ե.Սարգսյանի**, որը գործում է **«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի** կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ` պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ` ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1Գնորդն իրավունք ունի`**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք`

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա`

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք` պայմանագրով նախատեսվածի փոխարեն` պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռքբերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ)ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է`**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում`նաև պայմանագրի 6.5կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո` ողջամիտ ժամկետում,երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի`**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է`**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը`պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով,ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան`Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք` պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով,լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն,ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1 760 500 (մեկ միլիոն յոթհարյուր վաթսուն հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում` հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա` պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում,բայց ոչ ուշ,քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4.ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5.ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով` նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված` ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ`լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ»ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05(զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական)տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով,որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը,ջրհեղեղը,հրդեհը,պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը,պետական մարմինների ակտերը և այլն,որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտգալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

2 Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը կիրառելի չէ:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորու-թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա-րելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ______5______ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N1, N2, N3 և N3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ազգային | Էսզեթ Ֆարմա ՍՊԸ |
| անվտանգության | Ք.Երևան, Տիգրան Մեծի |
| ծառայություն | 63/23 |
| Նալբանդյան 104 | Կոնվերս Բանկ ՓԲԸ |
| 010-579-599 | 1930000521940100 |

Հ Հ ՖՆ գ ո ր ծ առ ն ակ ան
վ ար չ ո ւ թյ ո ւ ն
900011301075
01507079
Ար ամ Հ ակ ո բ յ ան

---------------------------------
/ս տո ր ագ ր ո ւ թյ ո ւ ն /
Կ .Տ

HAKOBYAN ARAM 3507590174

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2019.03.14 11:17:33 +04'00'

00433863

Եր ե մ Սար գ ս յ ան

---------------------------------
/ս տո ր ագ ր ո ւ թյ ո ւ ն /
Կ .Տ

Digitally signed by SARGSYAN YEREM 1101770244
Date: 2019.03.13 11:27:20 GMT+04:00

Հավելված N1
« » 20 թ.կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարում |
| 1 | 33411100/1 | Քարփուլ նիդլ 30գ 03 | Tecnofar, Իտալիա | Քարփուլային ասեղներ ներարկման համար N100 փաթեթավորումով, տարբեր չափսերի, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով (Կցված ֆայլ` lot_1_i_texnikakan_bnutagir.docx) | հատ | 22,77 | 22770 | 1000 | Հասցե \| Ենթակա քանակներ \| Ժամկետներ<br>ք. Երևան, Ամիրյան 23 \| 1000 \| 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |
| 2 | 33411110/1 | Լայֆ ՍԹԴ | Kerr, Իտալիա | Ատամնաբուժական նյութ Լայֆ ՍԹԴ կամ համարժեք 24գ, հիդրոկալցիի հիմքի վրա պատրաստված ռենտգենաթափանց | հատ | 8800,00 | 26400 | 3 | Հասցե \| Ենթակա քանակներ \| Ժամկետներ<br>ք. Երևան, Ամիրյան 23 \| 3 \| 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |

<table>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>կոշտություն, որը նախատեսված է կուլտիայի ծածկման համար, ինչպես նաև որպես տակդիր-ցեմենտ բոլոր տեսակի պլոմբանյութերի համար, աշխատանքային 23C 50% խոնավության դեպքում 6 րոպե վերջնական քարացման համար, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով (Կցված ֆայլ՝ lot_2_i_texnikakan_bnutagir.docx)</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>3</td><td>33411120/1</td><td>Փայնթ 4 եվրոսիրինջ կիթ</td><td>Kerr, Իտալիա</td><td>Ատամնաբուժական պլոմբանյութ Փոյնթ 4 եվրոսիրինջ կիթ կամ համարժեք, 26 գրամ պարունակությամբ, EA2, EA3, EA3.5, EB2, T1 գույներով, ինչպես նաև բոնդ 5մլ,</td><td>հատ</td><td>79000,00</td><td>79000</td><td>1</td><td><table><tr><td>Հասցե</td><td>Ենթակա քանակներ</td><td>Ժամկետներ</td></tr><tr><td>Ք. Երևան, Ամիրյան 23</td><td>1</td><td>2019թ-ի սեպտեմբերի 30-ը</td></tr></table></td></tr>
</table>

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | օրթոֆուֆորական թթու 2x3գ, ոչ օրգանական համդրիչները միջինում կազմում են 0,4մկմ, բոլոր գույները հանդիսանում են ոչ ռենտգենափաթանց, եվրոպական կամ համարժեք արտադրության, Յանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով (Կցված ֆայլ` lot_3_i_texnikakan_bnutagir.docx) | | | | | |
| 4 | 33411130/1 | Փրեմիս սիրինջ | Kerr, Իտալիա | Ատամնաբուժական պլոմբանյութ փրեմիս կամ համարժեք, որը կառուցված է 3 մոդուլանոց նանոկոմպոզիցիաներից,2 ատհեշտէ պոլիմերիզացվում և 2 ատցածր լուսային հզորության պայմաններում,այն համարվում է | հատ | 39800,00 | 79600 | 2 | Հասցե: Ք. Երևան, Ամիրյան 23<br>Ենթակա քանակներ: 2<br>Ժամկետներ: 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | աշխարհի ամենաքիչ նստվածք ունեցող պլոմբանյութերից մեկը` 1.4-1.6%, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:( Կցված ֆայլ` lot_4_i_texnikakan_bnutagir.docx) | | | | | |
| 5 | 33411160/1 | Օֆթի բոնդ սոլո պլյուս 5մլ | Coltene Whaledent, Շվեյցարիա | Օփթի բոնդ սոլո պլուս 5մլ կամ համարժեք:Ատամնաբուժական սոսինձ-նյութ 5մլ 22ով, Էթանոլի հիմքով, 15 տոկոս ծավալով բաղկացած է ոչ օրգանական բարիումական լցիչից 0.4 միկրոն մասնիկների չափով, եվրոպական կամ համարժեք արտադրության Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես | հատ | 8200,00 | 8200 | 1 | Հասցե \| Ենթակա քանակներ \| Ժամկետներ<br>ք. Երևան, Ամիրյան 23 \| 1 \| 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |

<table>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>ծ ան ո թ ո ւ թ<br>յ ո ւ ն ը ):Ֆ ի ր<br>մ այ ի ն<br>ն շ ո ւ մ ո վ :(<br>Կ ց վ ած<br>ֆ այ լ `<br>lot_5_i_texnikakan_bn<br>utagir.docx )<br>Սվիստեք<br>բոնդ</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>6</td><td>33411170/1</td><td>Ֆ ի լ թ ե ք<br>ո ւ լ տ ի մ ե յ<br>թ 48գ</td><td>3M,<br>Գերմանիա</td><td>Ֆ ի լ թ ե կ<br>ո ւ լ տ ի մ ե յ<br>թ 48գ կ ամ<br>հ ամ ար ժ ե ք<br>:Ա տամ ն աբ ո<br>ւ ժ ակ ան<br>ն ան ո հ ի բ ր<br>ի դ<br>պլ ո մ բ ան յ<br>ո ւ թ 48գ ,ո ր ը<br>ի ր մ ե ջ<br>պար ո ւ ն ակ<br>ո ւ մ է<br>գ ո ւ յ ն ե ր<br>DA2, DA3, DB3, Body<br>A2, A3, A3,5,B2, EA1,<br>EA3, EW,<br>ի ն չ պե ս<br>ն աև AT,<br>կ ո մ պլ ե կ տ<br>ն ի ր մ ե ջ<br>պար ո ւ ն ակ<br>ո ւ մ է ն աև<br>ս կ ավ առ ակ ,<br>ո ր ց ո ւ յ ց է<br>տալ ի ս ,թ ե<br>յ ո ւ ր աք ան<br>չ յ ո ւ ր<br>գ ո ւ յ ն ը ո ր<br>գ ո ւ յ ն ե ր ի<br>հ ե տ<br>կ ար ե լ ի է<br>հ ամ ադ ր ե լ ,<br>ե զ ակ ի<br>պլ ո մ պան յ<br>ո ւ թ է ,ք ան ի<br>ո ր<br>պար ո ւ ն ակ<br>ո ւ մ է 4<br>տար բ ե ր<br>տե ս ակ ի շ ե<br>ր տե ր ,<br>ն ան ո կ ր ի ս<br>տալ ն ե ր ի<br>չ ափս ե ր ը<br>0.6-20մ կ մ է ,<br>ո չ<br>օ ր գ ան ակ ա<br>ն<br>խտան յ ո ւ թ<br>ի<br>պար ո ւ ն ակ</td><td>հ ատ</td><td>280000,00</td><td>280000</td><td>1</td><td><table><tr><td>Հ աս ց<br>ե</td><td>Ե ն թ ա<br>կ ա<br>ք ան ա<br>կ ն ե ր</td><td>Ժ ամ կ<br>ե տն ե<br>ր</td></tr><tr><td>Ք .<br>Ե ր և ա<br>ն ,<br>Ա մ ի ր<br>յ ան 23</td><td>1</td><td>2019թ -ի<br>ս ե պտ<br>ե մ բ ե<br>ր ի 30-ը</td></tr></table></td></tr>
</table>

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ությունը 72.5% է, քաշը 55.6%-ը, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով: (Կցված ֆայլ՝ lot_6_i_texnikakan_bnutagir.docx) | | | | | |
| 7 | 33411180/1 | Փրեմիս սիրինջ ստանդարտ կիտ | Kerr, Իտալիա | Ատամնաբուժական պլոմբանյութ փրեմիս կամ համարժեք, որը կառուցված է 3 մոդուլանոց նանոկոմպոզիցիաներից, շատ հեշտ է պոլիմերիզացվում և շատ ցածր լուսային հզորության պայմաններում, այն համարվում է աշխարհի ամենաքիչ նստվածք ունեցող պլոմբանյութերից մեկը, այն իր մեջ պարունակում է EA2, EA3, EA3.5 EB2, DA2, DA3, DA3.5 TC, ինչպես նաև Օփթի | հատ | 155000,00 | 155000 | 1 | (see nested table below) |

| Հասցե | Ենթակա քանականեր | Ժամկետներ |
|---|---|---|
| Ք. Երևան, Ամիրյան 23 | 1 | 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բ ո ն դ<br>պր այ մ ե ր<br>5մ լ և<br>Օ փ թ ի բ ո ն դ<br>ադ հ ե ս ի վ<br>5մ լ , հ ղ մ ան<br>ս կ ավ առ ակ<br>ն ե ր ի<br>կ ո մ պլ ե կ տ,<br>ե վ ր ո պակ ա<br>ն կ ամ<br>հ ամ ար ժ ե ք<br>ար տադ ր ո ւ<br>թյ ան ,<br>Յ ան ձ մ ան<br>պահ ի ն<br>պի տան ե լ ի<br>ո ւ թյ ան<br>ժ ամ կ ե տի<br>առ կ այ ո ւ թ<br>յ ո ւ ն *(տե ս<br>ծ ան ո թո ւ թ<br>յ ո ւ ն ը ):Ֆ ի ր<br>մ այ ի ն<br>ն շ ո ւ մ ո վ :(<br>Կ ց վ ած<br>ֆ այ լ `<br>lot_7_i_texnikakan_bn<br>utagir.docx ) | | | | | |
| 8 | 33411190/1 | Ար տի ս տ<br>ս ի ր կ ի տ<br>N36AKA | Kerr,<br>Իտալիա | Ար տի ս տ<br>ս ի ր կ ի տ<br>N36AKA կ ամ<br>հ ամ ար ժ ե ք<br>ը<br>Ա տամ ն աբ ո<br>ւ ժ ո ւ թյ ո ւ<br>ն ո ւ մ<br>օ գ տագ ո ր ծ<br>վ ո ղ<br>պլ ո մ բ ան յ<br>ո ւ թ ,<br>ե վ ր ո պակ ա<br>ն կ ամ<br>հ ամ ար ժ ե ք<br>ար տադ ր ո ւ<br>թյ ան :<br>Յ ան ձ մ ան<br>պահ ի ն<br>պի տան ե լ ի<br>ո ւ թյ ան<br>ժ ամ կ ե տի<br>առ կ այ ո ւ թ<br>յ ո ւ ն *(տե ս<br>ծ ան ո թո ւ թ<br>յ ո ւ ն ը ):<br>Ֆ ի ր մ այ ի<br>ն շ ո ւ մ ո վ :(<br>Կ ց վ ած<br>ֆ այ լ `<br>lot_8_i_texnikakan_bn<br>utagir.docx )<br>Յերկուլայթ | հ ատ | 185000,00 | 185000 | 1 | Յ աս ց ե / Ե ն թա կ ա ք ան ա կ ն ե ր / Ժ ամ կ ե տն ե ր<br>ք . Ե ր և ա ն , Ա մ ի ր յ ան 23 / 1 / 2019թ -ի ս ե պտ ե մ բ ե ր ի 30-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գեներալ<br>կիթ | | | | | |
| *9* | *33411200/1* | *Վ ե ն ո ւ ս<br>բ ե յ ս ի ք<br>կ ի թ* | Kerr,<br>Իտալիա | *Վ ե ն ո ւ ս<br>բ ե յ ս ի ք<br>կ ի թ 24գ կ ամ<br>հ ամ ար ժ ե ք<br>ն ան ո հ ի բ ր<br>ի դ<br>պլ ո մ բ ան յ<br>ո ւ թ<br>ն ախատե ս վ<br>ած<br>ատամ ն ե ր ի<br>վ ե ր ակ ան գ<br>ն մ ան<br>հ ամ ար ,<br>հ ավ աք ած ո<br>ւ ն ո ւ ն ի 3<br>տե ս ակ ի<br>ե զ ր ե ր `<br>է մ ալ այ ի ն ,<br>դ ե ն տի ն այ<br>ի ն և կ տր ի չ<br>ե զ ր ,ո ր ը<br>հ ն ար ավ ո ր<br>ո ւ թյ ո ւ ն է<br>այ ն<br>օ գ տագ ո ր ծ<br>ե լ<br>բ ազ մ աբ ն ո<br>ւ յ թ<br>հ ն ար ավ ո ր<br>ո ւ թյ ո ւ ն ն<br>ե ր ո վ ,<br>ե վ ր ո պակ ա<br>ն կ ամ<br>հ ամ ար ժ ե ք<br>ար տադ ր ո ւ<br>թյ ան ,<br>Հ ան ձ մ ան<br>պահ ի ն<br>պի տան ե լ ի<br>ո ւ թյ ան<br>ժ ամ կ ե տի<br>առ կ այ ո ւ թ<br>յ ո ւ ն \*(տե ս<br>ծ ան ո թո ւ թ<br>յ ո ւ ն ը )::<br>Ֆ ի ր մ այ ի ն<br>ն շ ո ւ մ ո վ :(<br>Կ ց վ ած<br>ֆ այ լ `<br>lot_9_i_texnikakan_bn<br>utagir.docx )*<br>Հերկուլայթ<br>ուլտրա<br>ինթրո կիթ | *հ ատ* | 130000,00 | 130000 | *1* | *Հ աս ց<br>ե* / *Են թա<br>կ ա<br>ք ան ա<br>կ ն ե ր* / *ժ ամ կ<br>ե տն ե<br>ր* ; *ք .<br>Եր և ա<br>ն ,<br>Ամ ի ր<br>յ ան 23* / *1* / *2019թ -ի<br>ս ե պտ<br>ե մ բ ե<br>ր ի 30-ը* |
| *10* | *33411210/1* | *Փաս տե<br>ֆ ի լ ե ր ս* | NIC,<br>Չինաստան | *Ար մ ատախո<br>ղ ո վ ակ ն ե ր<br>ը<br>լ ի ց ք ան յ ո* | *հ ատ* | 300,00 | 48000 | *160* | *Հ աս ց<br>ե* / *Են թա<br>կ ա<br>ք ան ա* / *ժ ամ կ<br>ե տն ե<br>ր* |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ւթով լցնելու համար գործիք 4 հատ տուփի մեջ, Յանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով (Կցված ֆայլ՝ lot_10_i_texnikakan_bnutagir.docx) | | | | | կներ<br>Ք. Երևան, Ամիրյան 23 \| 160 \| 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |
| 13 | 33411320/1 | Սուպերփոլի 2 թութքլին ինգ պաստա | Kerr, Իտալիա | Սուպերփոլի 2 թութքլին ինգ պաստա 45կամ համարժեք, վարդագույն գունի փայլեցնող հեղուկ, որը նախատեսված է բնական և պլոմբավորված ատամների մաքրման և փայլեցման համար,չի պարունակում ֆտոր, եվրոպական կամ համարժեք արտադրության, հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով :(Կցված ֆայլ՝ lot_13_i_texnikakan_bnutagir.docx) | հատ | 6000,00 | 6000 | 1 | Յասցե \| Ենթակա քանակներ \| Ժամկետներ<br>Ք. Երևան, Ամիրյան 23 \| 1 \| 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | 33411340/1 | գութափերչա սլայդս | Pearl Dent, Վիետնամ | Գութափերչա սլայդս կամ համարժեք Ատամնաբուժական գուտապերչա, արմատները մշտական լիցքանելու համար, 120 հատ տուփի պարունակությամբ, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով (Կցված ֆայլ՝ lot_14_i_texnikakan_bnutagir.docx) | հատ | 1090,00 | 5450 | 5 | Հասցե / Ենթակա քանակներ / Ժամկետներ<br>ք. Երևան, Ամիրյան 23 / 5 / 2019թ-ի մարտի 31-ը |
| 15 | 33411350/1 | գութափերչա մարկեր | Pearl Dent, Վիետնամ | Գութափերչա մարկեր կամ համարժեք Ատամնաբուժական գուտապերչա գծիկներով գծանշված, արմատները մշտական լիցքանելու համար, 120 հատ տուփի պարունակությամբ, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով ( | հատ | 1090,00 | 2180 | 2 | Հասցե / Ենթակա քանակներ / Ժամկետներ<br>ք. Երևան, Ամիրյան 23 / 2 / 2019թ-ի մարտի 31-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կցված ֆայլ՝ lot_15_i_texnikakan_bnutagir.docx) | | | | | |
| 16 | 33411360/1 | Ֆեյս մասքս | Superdent, Չինաստան | Բժշկական դիմակներ ռեզինե կապերով, քթի մասում ֆիքսելու հնարավորությամբ, հանձնման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով (Կցված ֆայլ՝ lot_16_i_texnikakan_bnutagir.docx) | հատ | 19,92 | 9960 | 500 | Հասցե / Ենթակա քանակներ / Ժամկետներ<br>ք. Երևան, Ամիրյան 23 / 500 / 2019թ-ի հունիսի 30-ը |
| 18 | 33411380/1 | Լիզոֆորմին 3000 1000մլ | Lysoformin, Գերմանիա | Լիզոֆորմին 3000 1000մլ կամ համարժեք ախտահանիչ հեղուկ, միջոցը երկնագույն, թափանցիկ, թույլ հոտով խտանյութ է, որպես ազդող նյութ միջոցի կազմի մեջ մտնում են գլուտարային ալդեհիդ 9,5%, գլիօքսալ 7.5%, դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ 9.6% և այլ բաղադրամասեր 6% և այլն, մջջոցը հաստեսվա | հատ | 13200,00 | 92400 | 7 | Հասցե / Ենթակա քանակներ / Ժամկետներ<br>ք. Երևան, Ամիրյան 23 / 3 / 2019թ-ի հունիսի 30-ը<br>ք. Երևան, Ամիրյան 23 / 4 / 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծ է բժշկական սարքերի, սարքավորումների ինչպես նաև գործիքների մակերեսային և ընդհանուր ախտահանման համար, լուծույթի աշխատանքային պիտանելության ժամկետը 14 օր է, խտանյութը կախված օգտագործման նպատակից ունի բացման տարբեր չափաբաժիններ,որը նշված է նյութի տեխ. Բնութագրում, եվրոպական կամ համարժեք արտադրության, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով:( Կցված Ֆայլ` lot_18_i_texnikakan_bnutagir.docx) | | | | | |
| 19 | 33411400/1 | Ֆայլեր | NIC, Չինաստան | Արմատախողովակների լայնացման | հատ | 160,00 | 13440 | 84 | Հասցե <br> Ենթակա քանակներ <br> Ժամկետներ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գ ո ր ծ ի ք ն ե ր տ ո ւ փ ի մ ե ջ , Յ ա ն ձ մ ա ն պ ա հ ի ն պ ի տ ա ն ե լ ի ո ւ թ յ ա ն ժ ա մ կ ե տ ի ա ռ կ ա յ ո ւ թ յ ո ւ ն *(տե ս ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն ը ):Ֆ ի ր մ ա յ ի ն ն շ ո ւ մ ո վ :( Կ ց վ ա ծ ֆ ա յ լ ՝ lot_19_i_texnikakan_b nutagir.docx ) | | | | | Ք . Ե ր և ա ն , Ա մ ի ր յ ա ն 23 — 84 — 2019թ -ի ս ե պ տ ե մ բ ե ր ի 30-ը |
| 20 | 33411410/1 | Է ն դ ո մ ե տ ա զ ո ն +Է վ գ ե ն ո լ | PD, Շվեյցարիա | Է ն դ ո մ ե տ ա զ ո ն + Է վ գ ե ն ո լ կ ա մ հ ա մ ա ր ժ ե ք ը Ա տ ա մ ն ա բ ո ւ ժ ա կ ա ն ռ ե ն տ գ ե ն ա թ ա փ ա ն ց լ ի ց ք ա ն յ ո ւ թ Է ն դ ո մ ե տ ա զ ո ն +Է վ գ ե ն ո լ 15գ փո շ ի +15մ լ հ ե ղ ո ւ կ Է վ գ ե ն ո լ դ ե ք ս ա մ ե տ ա զ ո ն ի հ ի մ ք ի վ ր ա, փո շ ի ն պ ա ր ո ւ ն ա կ ո ւ մ է 22.5 ի մ ո լ ա յ ո դ ի ն , 2.2կ ի ս ա կ ս ի մ ե տ ա լ ի ն , ե վ ր ո պ ա կ ա ն կ ա մ հ ա մ ա ր ժ ե ք ա ր տ ա դ ր ո ւ թ յ ա ն , Յ ա ն ձ մ ա ն պ ա հ ի ն պ ի տ ա ն ե լ ի ո ւ թ յ ա ն ժ ա մ կ ե տ ի ա ռ կ ա յ ո ւ թ յ ո ւ ն *(տե ս ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն ը ):Ֆ ի ր մ ա յ ի ն ն շ ո ւ մ ո վ :( | հ ա տ | 17500,00 | 122500 | 7 | Յ ա ս ց ե — Ե ն թ ա կ ա ք ա ն ա կ ն ե ր — Ժ ա մ կ ե տ ն ե ր<br>Ք . Ե ր և ա ն , Ա մ ի ր յ ա ն 23 — 4 — 2019թ -ի մ ա ր տ ի 31-ը<br>Ք . Ե ր և ա ն , Ա մ ի ր յ ա ն 23 — 3 — 2019թ -ի հ ո ւ ն ի ս ի 30-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Կցված ֆայլ՝ lot_20_i_texnikakan_bnutagir.docx)<br>Էնդոֆիլ + Էվգենոլ | | | | | |
| 21 | 33411420/1 | Կանալուղ իչներ N4 | NIC, Չինաստան | Արմատախողովակները լիցքանյութով լցնելու համար գործիք 4 հատ տուփի մեջ, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով (Կցված ֆայլ՝ lot_21_i_texnikakan_bnutagir.docx) | հատ | 300,00 | 60000 | 200 | Հասցե \| Ենթակա քանակներ \| Ժամկետներ<br>ք. Երևան, Ամիրյան 23 \| 200 \| 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |
| 22 | 33411430/1 | Կ-Ֆայլ 15-40 N4 | NIC, Չինաստան | Արմատախողովակների լայնացման գործիքներ Կ Ֆայլ 6 հատ տուփի մեջ, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը):Ֆիրմային նշումով (Կցված ֆայլ՝ lot_22_i_texnikakan_bnutagir.docx) | հատ | 160,00 | 28800 | 180 | Հասցե \| Ենթակա քանակներ \| Ժամկետներ<br>ք. Երևան, Ամիրյան 23 \| 180 \| 2019թ-ի սեպտեմբերի 30-ը |
| 23 | 33411470/1 | Պրեմիս | Kerr, Իտալիա | Ատամնաբուժական պլոմբանյութ պրեմիս կամ համարժեք | հատ | 45000,00 | 90000 | 2 | Հասցե \| Ենթակա քանակներ \| Ժամկետներ<br>ք. Երևան \| 2 \| 2019թ-ի սեպտ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ը ,ո ր ը<br>կ առ ո ւ ց վ ա<br>ծ է 3<br>մ ո դ ո ւ լ ան<br>ո ց<br>ն ան ո կ ո մ պ<br>ո զ ի ց ի ան ե<br>ր ի ց ,2 ատ<br>հ ե շ տէ<br>պո լ ի մ ե ր ի<br>զ աց վ ո ւ մ և<br>2 ատ ց ած ր<br>լ ո ւ ս այ ի ն<br>հ զ ո ր ո ւ թյ<br>ան<br>պայ մ ան ն ե<br>ր ո ւ մ ,այ ն<br>հ ամ ար վ ո ւ<br>մ է<br>աշ խար հ ի<br>ամ ե ն աք ի չ<br>ն ս տվ ած ք<br>ո ւ ն ե ց ո ղ<br>պլ ո մ բ ան յ<br>ո ւ թե ր ի ց<br>մ ե կ ը `1.4 –<br>1.6%,այ ն ի ր<br>մ ե ջ<br>պար ո ւ ն ակ<br>ո ւ մ է EA, EA3,<br>DA2,ի ն չ պե ս<br>ն աև Օփթի<br>բ ո ն դ ս ո լ ո<br>պլ ո ւ ս 5մ լ ,<br>ո ր ն է լ ի ր<br>մ ե ջ<br>պար ո ւ ն ակ<br>ո ւ մ է 15%<br>լ ց ան յ ո ւ թ ,<br>ո ր ը տալ ի ս<br>է 0.4մ ի կ ր ո<br>բ ար ի այ ի ն<br>ապակ ի ,<br>ե վ ր ո պակ ա<br>ն կ ամ<br>հ ամ ար ժ ե ք<br>ար տադ ր ո ւ<br>թյ ան ,<br>Դ ան ձ մ ան<br>պահ ի ն<br>պի տան ե լ ի<br>ո ւ թյ ան<br>ժ ամ կ ե տի<br>առ կ այ ո ւ թ<br>յ ո ւ ն *(տե ս<br>ծ ան ո թո ւ թ<br>յ ո ւ ն ը ):Ֆ ի ր<br>մ այ ի ն<br>ն շ ո ւ մ ո վ :(<br>Կ ց վ ած<br>Ֆ այ լ `<br>lot_23_i_texnikakan_b<br>nutagir.docx ) | | | | | ն ,<br>Ամ ի ր<br>յ ան 23 | | ե մ բ ե<br>ր ի 30-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 33411480/1 | Վ ե ր տի ս ֆլ ո ո ւ | Kerr, Իտալիա | Վ ե ր տի ս ֆլ ո ո ւ կ ամ հ ամ ար ժ ե ք հ ե ղ ո ւ կ պլ ո մ բ ան յ ո ւ թ 2գ պար ո ւ ն ակ ո ւ թյ ամ բ , օ գ տագ ո ր ծ մ ան ժ ամ ան ակ չ ի պահ ան ջ վ ո ւ մ ո չ ադ գ ե զ ի ա, ո չ է լ թթվ ի օ գ տագ ո ր ծ ո ւ մ ,այ դ ամ ե ն ը այ ն պար ո ւ ն ակ ո ւ մ է 1 կ ո մ պո ն ե ն տո ւ մ , ե վ ր ո պակ ա ն կ ամ հ ամ ար ժ ե ք ար տադ ր ո ւ թյ ան , Հ ան ձ մ ան պահ ի ն պի տան ե լ ի ո ւ թյ ան ժ ամ կ ե տի առ կ այ ո ւ թ յ ո ւ ն *(տե ս ծ ան ո թո ւ թ յ ո ւ ն ը ): Ֆի ր մ այ ի ն ն շ ո ւ մ ո վ :( Կ ց վ ած ֆայ լ ՝ lot_24_i_texnikakan_b nutagir.docx ) | հ ատ | 15000,00 | 45000 | 3 | Հ աս ց ե \| Ե ն թա կ ա ք ան ա կ ն ե ր \| Ժ ամ կ ե տն ե ր ; ք . Ե ր և ա ն , Ամ ի ր յ ան 23 \| 3 \| 2019թ -ի ս ե պտ ե մ բ ե ր ի 30-ը |
| 25 | 33411510/1 | Մ աք ց ե մ է լ ի տ | Kerr, Իտալիա | Մ աք ց ե մ է լ ի տ ե ր կ ակ ի կ ար ծ ր աց մ ան կ ո մ պո զ ի տ այ ի ն ց ե մ ե ն տ ՝5,0 ն ե ր ար կ ի չ թափան ց ի կ գ ո ւ յ ն ո վ և 5,0 ս տան դ ար տ խառ ն ի չ ,ծ ա յ ր ադ ի ր ն ե ր կ ամ հ ամ ար ժ ե ք , ո ր ը ն ախատե ս վ ած է | հ ատ | 26000,00 | 26000 | 1 | Հ աս ց ե \| Ե ն թա կ ա ք ան ա կ ն ե ր \| Ժ ամ կ ե տն ե ր ; ք . Ե ր և ա ն , Ամ ի ր յ ան 23 \| 1 \| 2019թ -ի ս ե պտ ե մ բ ե ր ի 30-ը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կ ե ր ամ ի կ ա<br>կ ան ,<br>կ ո մ պո զ ի տ<br>այ ի ն ,<br>մ ե տաղ ակ ա<br>ն<br>կ ո ն ս տր ո ւ<br>կ ց ի ան ե ր ի<br>ֆ ի ք ս աց ի ա<br>յ ի հ ամ ար ,<br>այ ն չ ի<br>պ ահ ան ջ ո ւ<br>մ թ թ վ այ ի ն<br>մ շ ակ ո ւ մ և<br>առ գ ե զ ի ա,<br>այ ն<br>պ ար ո ւ ն ակ<br>վ ո ւ մ է<br>ց ե մ ե ն տի<br>մ ե ջ ,այ ն<br>ն ախ ատե ս վ<br>ած է ն աև<br>վ ի ն ի ր ն ե ր<br>ի<br>ֆ ի ք ս աց ի ա<br>յ ի հ ամ ար ,<br>ե վ ր ո պակ ա<br>ն կ ամ<br>հ ամ ար ժ ե ք<br>ար տադ ր ո ւ<br>թյ ան ,<br>Յ ան ձ մ ան<br>պ ահ ի ն<br>պ ի տան ե լ ի<br>ո ւ թյ ան<br>ժ ամ կ ե տի<br>առ կ այ ո ւ թ<br>յ ո ւ ն *(տե ս<br>ծ ան ո թո ւ թ<br>յ ո ւ ն ը );Ֆ ի ր<br>մ այ ի ն<br>ն շ ո ւ մ ո վ :(<br>Կ ց վ ած<br>ֆ այ լ `<br>lot_25_i_texnikakan_b<br>nutagir.docx ) | | | | | |
| 26 | 33411520/1 | Ֆլ յ ո ւ ջ ի<br>պլ յ ո ւ ս | GS,<br>Ճապոնիա | Ֆյ ո ւ ջ ի<br>պլ յ ո ւ ս A3<br>կ ամ<br>հ ամ ար ժ ե ք<br>կ ո մ պո զ ի տ<br>այ ի ն<br>ապակ ե ի ո ն<br>ո մ ե ր այ ի ն<br>ց ե մ ե ն տ,<br>ո ր ն ի ր մ ե ջ<br>պ ար ո ւ ն ակ<br>ո ւ մ է 15գ<br>փո շ ի ,8գ<br>հ ե ղ ո ւ կ ,<br>ի ն չ պե ս<br>ն աև 7գ<br>կ ո ն դ ի ց ի ո | հ ատ | 48000,00 | 144000 | 3 | <table><tr><td>Հ աս ց ե</td><td>Են թա կ ա ք ան ա կ ն ե ր</td><td>Ժ ամ կ ե տն ե ր</td></tr><tr><td>ք . Ե ր և ա ն , Ա մ ի ր յ ան 23</td><td>3</td><td>2019թ -ի ս ե պտ ե մ բ ե ր ի 30-ը</td></tr></table> |

<table>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>ներ,որն էլ<br>իր հերթին<br>ի<br>տարբերու<br>թյուն այլ<br>ցեմենտնե<br>րի<br>ապահովու<br>մ է ավելի<br>արագ և<br>ավելի<br>ամուր<br>կպչունու<br>թյուն,,<br>ճապոնակա<br>ն կամ<br>համարժեք<br>արտադրու<br>թյան,<br>Հանձման<br>պահին<br>պիտանելի<br>ության<br>ժամկետի<br>առկայութ<br>յուն *(տես<br>ծանոթութ<br>յունը):Ֆիր<br>մային<br>նշումով:(<br>Կցված<br>ֆայլ՝<br>lot_26_i_texnikakan_b<br>nutagir.docx)</td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>29</td><td>33411570/1</td><td>3M ESPE բոնդ</td><td>3M, Գերմանիա</td><td>3M ESPE բոնդ 2<br>6գ կամ<br>համարժեք,<br>այն<br>համալրվա<br>ծ է<br>լրացուցի<br>չ<br>նանոմասն<br>իկների<br>համդրութ<br>յամբ,որը<br>հնարավոր<br>ություն է<br>տալիս<br>որպեսզի<br>ադհեսիվը<br>ավելի լավ<br>թափանցվի<br>դենտինայ<br>ին շերտի<br>մեջ,<br>միաժաման<br>ակ<br>ապահովել<br>ով ի<br>տարբերու<br>թյուն այլ<br>ադհեսիվն</td><td>հատ</td><td>27000,00</td><td>54000</td><td>2</td><td><table><tr><td>Հասցե</td><td>Ենթակա քանակներ</td><td>Ժամկետներ</td></tr><tr><td>ք. Երևան, Ամիրյան 23</td><td>2</td><td>2019թ-ի մարտի 31-ը</td></tr></table></td></tr>
</table>

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ե ր ի հ ն ար ավ ո ր ի ն ս բ ար ակ 2 ե ր տ,այ ն ա2 խ ատ ան ք այ ի ն բ ո լ ո ր փո ւ լ ե ր ո ւ մ պ ահ պ ան ո ւ մ է թ ափ ան ց ի կ գ ո ւ յ ն ,ԱՄՆ ար տադ ր ո ւ թյ ան կ ամ հ ամ ար ժ ե ք , Հ ան ձ մ ան պ ահ ի ն պի տ ան ե լ ի ո ւ թյ ան ժ ամ կ ե տի առ կ այ ո ւ թ յ ո ւ ն *(տե ս ծ ան ո թո ւ թ յ ո ւ ն ը ):Ֆ ի ր մ այ ի ն ն 2 ո ւ մ ո վ :( Կ ց վ ած Ֆ այ լ ՝ lot_29_i_texnikakan_b nutagir.docx ) | | | | | |
| 31 | 33141193/1 | ատամ ն աբ ո ւ ժ ակ ան ս պառ մ ան պար ագ ան ե ր | Hefei Telijie, Չինաստան | Բ 2 ժ կ ակ ան գ ո ր ծ ի ք ն ե ր ի ախ տ ահ ան մ ան հ ամ ար ան հ ատակ ա ն փաթե թն ե ր , 90մ մ x260մ մ չ ափե ր ի , N200 կ ամ այ լ ք ան ակ ի փաթե թավ ո ր ո ւ մ ո վ տո ւ փ: Հ ան ձ մ ան պ ահ ի ն պի տ ան ե լ ի ո ւ թյ ան ժ ամ կ ե տի առ կ այ ո ւ թ յ ո ւ ն *(տե ս ծ ան ո թո ւ թ յ ո ւ ն ը ):Ֆ ի ր մ այ ի ն ն 2 ո ւ մ ո վ :( Կ ց վ ած Ֆ այ լ ՝ lot_31_i_texnikakan_b nutagir.docx ) | հ ատ | 18,00 | 46800 | 2600 | Հ աս ց ե / Ե ն թ ա կ ա ք ան ա կ ն ե ր / Ժ ամ կ ե տն ե ր<br>Ք . Ե ր և ա ն , Ա մ ի ր յ ան 23 / 1200 / 2019թ -ի հ ո ւ ն ի ս ի 30-ը<br>Ք . Ե ր և ա ն , Ա մ ի ր յ ան 23 / 1400 / 2019թ -ի ս ե պտ ե մ բ ե ր ի 30-ը |

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| ՀՀ ազգային անվտանգության ծառայություն | Էսգեթ Ֆարմա ՍՊԸ |
| Նալբանդյան 104 | Ք.Երևան, Տիգրան Մեծի 63/23 |
| 010-579-599 | Կոնվերս Բանկ ՓԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | 1930000521940100 |
| 900011301075 | 00433863 |
| 01507079 | |
| Արամ Հակոբյան | Երեմ Սարգսյան |
| --------------------------------- | --------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

HAKOBYAN ARAM 3507590174

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=•••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2019.03.14 11:18:05 +04'00'

Digitally signed by SARGSYAN YEREM 1101770244
Date: 2019.03.13 11:29:15 GMT+04:00

Հավելված N2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում ** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 33411100/1 | Քարփուլ Նիդլ 30գ 03 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 22770 | 22770 | 22770 | 22770 | 22770 |
| 2 | 33411110/1 | Լայ ՖՍԹԴ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 26400 | 26400 | 26400 | 26400 | 26400 |
| 3 | 33411120/1 | Փայնթ 4 եվրոսիր ինջկրթ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 79000 | 79000 | 79000 | 79000 | 79000 |
| 4 | 33411130/1 | Փրեմիս սիրինջ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 79600 | 79600 | 79600 | 79600 | 79600 |
| 5 | 33411160/1 | Օֆթի բոնդ սոլոպլյուս 5մլ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 8200 | 8200 | 8200 | 8200 | 8200 |
| 6 | 33411170/1 | Ֆիլթեք ուլտիմեյթ 48գ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 280000 | 280000 | 280000 | 280000 | 280000 |
| 7 | 33411180/1 | Փրեմիս սիրինջ ստանդարտ կիտ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 155000 | 155000 | 155000 | 155000 | 155000 |
| 8 | 33411190/1 | Արտիստ սիրկիտ N36AKA | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 185000 | 185000 | 185000 | 185000 | 185000 |
| 9 | 33411200/1 | Վենուս բեյսիք կիթ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 130000 | 130000 | 130000 | 130000 | 130000 |
| 10 | 33411210/1 | Փաստե ֆիլերս | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 48000 | 48000 | 48000 | 48000 | 48000 |
| 13 | 33411320/1 | Սուպերփոլիշ թուբքլինինգ պաստա | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 14 | 33411340/1 | գութափերչա սլայդս | 0 | 0 | 5450 | 5450 | 5450 | 5450 | 5450 | 5450 | 5450 | 5450 | 5450 | 5450 | 5450 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 33411350/1 | գութա փերչա մարկեր | 0 | 0 | 2180 | 2180 | 2180 | 2180 | 2180 | 2180 | 2180 | 2180 | 2180 | 2180 | 2180 |
| 16 | 33411360/1 | Ֆեյս մասքս | 0 | 0 | 0 | 0 | 0 | 9960 | 9960 | 9960 | 9960 | 9960 | 9960 | 9960 | 9960 |
| 18 | 33411380/1 | Լիզոֆոր մին 3000 1000մլ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 39600 | 39600 | 39600 | 92400 | 92400 | 92400 | 92400 | 92400 |
| 19 | 33411400/1 | Ֆայլեր | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 13440 | 13440 | 13440 | 13440 | 13440 |
| 20 | 33411410/1 | Էնդոմետազոն +Էվգենոլ | 0 | 0 | 70000 | 70000 | 70000 | 122500 | 122500 | 122500 | 122500 | 122500 | 122500 | 122500 | 122500 |
| 21 | 33411420/1 | Կանալոլ ցիչներ N4 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 22 | 33411430/1 | Կ-Ֆայլ 15-40 N4 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 28800 | 28800 | 28800 | 28800 | 28800 |
| 23 | 33411470/1 | Պրեմիս | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 |
| 24 | 33411480/1 | Վերտիս Ֆլոու | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 45000 | 45000 | 45000 | 45000 | 45000 |
| 25 | 33411510/1 | Մաքցեմ Էլիտ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 26000 | 26000 | 26000 | 26000 | 26000 |
| 26 | 33411520/1 | Ֆլյուջի պլյուս | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 144000 | 144000 | 144000 | 144000 | 144000 |
| 29 | 33411570/1 | 3M ESPE բոնդ | 0 | 0 | 54000 | 54000 | 54000 | 54000 | 54000 | 54000 | 54000 | 54000 | 54000 | 54000 | 54000 |
| 31 | 33141193/1 | ատամնաբուժական սպառման պարագաներ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 21600 | 21600 | 21600 | 46800 | 46800 | 46800 | 46800 | 46800 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
**հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
Նալբանդյան 104
010-579-599
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011301075
01507079
Արամ Հակոբյան

HAKOBYAN ARAM
3507590174

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2019.03.14 11:18:42 +04'00'

**ՎԱՃԱՌՈՂ**
Էսզեթ Ֆարմա ՍՊԸ
Ք.Երևան, Տիգրան Մեծի 63/23
Կոնվերս Բանկ ՓԲԸ
1930000521940100
00433863

Երեմ Սարգսյան
Digitally signed by SARGSYAN YEREM 1101770244
Date: 2019.03.13 11:29:30 GMT+04:00

----------------------------------

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N3*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ______ ____ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| հվհհ ________________ . | հվհհ ____________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  »«  » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«________________»20թ.
Պայմանագրի համարը՝ ________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20 թ. դուրս գրված N___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |

| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
|---|---|
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«   »      20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ` Գնորդ) և ____________________
Գնորդի անվանումը  Վաճառողի անվանումը
(այսուհետ` Վաճառող) միջև 20 թ. ______________________-ին կնքված N_________ ______
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ`

| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
|---|---|
| Ստորագրություն | ստորագրություն |